Արձանագրություն N 1-1

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում Մալխաս և Ռոման Ամոյանների անվան նոր մարզադպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28.03.2025թ.
ժամը 10:40

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Հ. Գինովյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Կոմիտասյան
Հ. Եղոյան
Տ. Բարսեղյան
Վ. Մովսիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց, անդամ՝ Ռ. Ամոյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին

(Հ. Գինովյան)

1.1 ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5** ծածկագրով **ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում Մալխաս և Ռոման Ամոյանների անվան նոր մարզադպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության** ձեռքբերման գնման ընթացակարգի վերաբերյալ 2025 թվականի մարտի 26-ին ստացվել է հարցում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահող՝ ---------- Հ. Գինովյան
Անդամներ՝ ---------- Տ. Կոմիտասյան
---------- Հ. Եղոյան
---------- Տ. Բարսեղյան
---------- Վ. Մովսիսյան
Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 28-ի թիվ 1-1 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում Մալխաս և Ռոման Ամոյանների անվան նոր մարզադպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 26.03.2025թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 28.03.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

Գնման հրավերի **հավելված 1** տեխնիկական բնութագրի **18-րդ կետով սահմանված է**

18	ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	**Փուլ 1-ում «Նախնական նախագիծ» պատվիրատուին է ներկայացվում նախագծի էսքիզային տարբերակը՝ համաձայն 13 կետի, որը պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո, Խորհրդատուին վճարվում է ծառայությունների մատուցման պայմանագրի արժեքի 20%-ը:** Մնացած ֆինանսավորումը կկատարվի քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական գրավոր եզրակացությունը և համալիր փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո:

Որից հետևում է, որ 80% ֆինանսավորումը կտրամադրվի պարզ և համալիր փորձաքննությունների դրական եզրակացությունից հետո, որտեղ նշված չէ համալիր փորձաքննության համար սահմանված ժամկետ, որը կարող է ընթանալ 6 ամիս և ավել նաև սուբյեկտիվ պատճառներով, օրինակ կադաստրային կոորդինատների անհամապատասխանություն, քարտեզի շտկում, համադրում, սերվիտուտներ և այլն:

Նույն հրավերի հավելված 1 տեխնիկական բնութագրի **16 կետով սահմանված է՝**

16.	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒ**Ն)**	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և պատվիրատուին հանձնման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ **180 օրացուցային օր**, որից 60 օր Փուլ 1-ի «Նախագծի» համար:

«Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն **ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:**

Վերը նշվածից հետևում է, որ պայմանագրով սահմանված անորոշ ժամկետները և տարակերպ մեկնաբանությունները, ակամայից արդեն իսկ հանգեցնում են Կատարողին կրելու գույքային վնաս, քանի որ մի կողմից սահմանված 180 օր ժամկետի արձանագրությունից հետո առաջանում է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված պարտավորություն՝ այս պարագայում՝ 80% գումարի 20% ԱԱՀ-ը վճարել մինչև հաջորդ ամսվա 20-ը, որից հետո յուրաքանչյուր չվճարված օրվա համար աշխատում է տույժ 0.075% չափով (ԱՁ պարագայում եռամսյակի համար վճարել 10%), իսկ մյուս կողմից սահմանված է, որ Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց Կատարողին վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով. այսինքն՝ **պարզ և համալիր փորձաքննությունների դրական եզրակացությունները ստանալուց հետո, որոնց համար սահմանված չէ ժամկետներ:**

Այս հանգամանքը անհավասար և հակասող պայմաններ է ստեղծում կողմերի միջև, ինչը հակասում է ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի /այուհետ՝ նաև Օրենսգիրք/ 352-րդ հոդվածի 1-ին կետի, Օրենսգրքի 347-րդ հոդվածի և Օրենսգիրք/ 345-րդ հոդվածի պահանջներին:

Մասնավորապես, եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ տալ պարզաբանում՝ ինչպես է հնարավոր ՀՀ օրենսդրությանը հակասող դրույթների կիրառումը պետական գնման հրավերով և արդյոք դրանք առոչինչ չեն, քանի որ դրանց հետևանքով ցանկացած մասնակից հաղթելու դեպքում, արդեն իսկ դատապարտված է կրելու գույքային և նյութական վնասներ:

Պարզաբանում

Տեխնիկական բնութագրի 16-րդ կետով սահմանված ժամանակահատվածը (180 օրացուցային օր, որից 50 օրը Փուլ 1-ի «Նախագծի» համար) վերաբերվում է ԲԱՑԱՌԱՊԵՍ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակմանը, որն իր մեջ ՉԻ ՆԵՐԱՌՈՒՄ քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննությունների անցկացումը, որոնք իրականացվում են Պատվիրատուի կողմից:

Տեխնիկական բնութագրի 18-րդ սահմանված դրույթները վերաբերվում են աշխատանքների ֆինանսավորմանը, ուստի որևէ հակասություն չկա տեխնիկական բնութագրի 16-րդ կետի և Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ նորմատիվ իրավական ակտի հետ:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման վերաբերյալ ցանկացած գործողություն կարգավորվում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ, այդ թվում՝ դրանց քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննությունների անցկացումը, ուստի նախագծանախահաշվային փաստաթղթերը Պատվիրատուն կարող է ընդունել ՄԻԱՅՆ վերոնշյալ փորձաքննությունների դրական եզրակացություն ստանալու դեպքում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված ժամկետում ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնելուց հետո անցկացվող փորձաքննությունների ժամանակահատվածում նախագծող կազմակերպության նկատմամբ տույժեր չեն կիրառվում:

Քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննությունների արդյունքում, եթե նախագիծը վերադարձվում է լրամշակման, այդ աշխատանքներն իրականացվում են նախագծող կազմակերպության կողմից, որի համար տեխնիկական բնութագրով սահմանված են հստակ ժամկետներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նարինե Նիկոլայանին:

Հեռախոս՝ 011 621 821:

Էլեկտրանային փոստ՝ tender4@minurban.am:

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

ОБЪЯВЛЕНИЕ

о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии

№1-1 от 28.03.2025 года

и опубликовывается

в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры HHQK-GHKhTsDzB-25/5

Оценочная комиссия процедуры закупки под кодом HHQK-GHKhTsDzB-25/5, организованной с целью приобретения советнических услуг по разработке проектно-сметной документации строительства новой спортивной школы имени Малхаса и Романа Амоянов в общине Алагяз, Арагацотнской области РА, ниже представляет запросы, полученные 26.03.2025г. и предоставленные 28.03.2025г по ним разъяснения относительно приглашения по тому же коду:

Запрос

Приложение к приглашению на покупку, указанное в пункте 18 технической спецификации 1.

18	**ФИНАНСОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ВЫПОЛНЕННЫХ РАБОТ**	**На этапе 1 «Проект» эскизный вариант проекта представляется Заказчику в соответствии с пунктом 13, после принятия которого Заказчиком Консультанту выплачивается 20% стоимости договора на оказание услуг.** Остальные работы будут финансированы после приобретения положительного письменного заключения градостроительной простой экспертизы, положительного заключения комплексной экспертизы,

Из чего следует, что 80% финансирования будет предоставлено после положительного заключения простой и комплексной экспертиз, в которых не указан срок, установленный для комплексной экспертизы, который может длиться 6 месяцев и более, а также по субъективным причинам, таким как несоответствие кадастровых координат, исправление карты, сопоставление, сервитуты и т. д:

В приложении к тому же приглашению 1 из 16 технических спецификаций изложено`

16	**ПЕРИОД ОКАЗАНИЯ УСЛУГ (ПРОДОЛЖИТЕЛЬНОСТЬ)**	Срок выполнения работ предусмотреть в **180** календарных дней со следующего дня с даты вступления в силу договора, из них 50 дней на «Проект» по Этапу 1.

В соответствии с частью 1 статьи 13 Закона О закупках характеристики предмета закупки должны полностью и четко описывать характеристики приобретаемого товара, работы или услуги, условия их приобретения и оплаты, исключая неоднозначное толкование:

Из вышесказанного следует, что неопределенные сроки и различные комментарии, установленные договором, невольно уже приводят к тому, что исполнитель несет имущественный ущерб, поскольку, с одной стороны, после установленного 180-дневного срока возникает обязательство, установленное налоговым законодательством РА: в данном случае-уплатить 20% НДС с суммы 80% до 20 числа следующего месяца, после чего за каждый неоплаченный день взимается штраф в размере 0,075% (в случае ИП-платить 10% за квартал), а с другой стороны,, что заказчик платит

исполнителю за оказанную ему услугу в порядке, предусмотренном разделом 3 договора; то есть после получения положительных заключений простых и сложных экспертиз, для которых не установлены сроки:

Это обстоятельство создает неравные и противоречивые условия между сторонами, что противоречит требованиям пункта 1 статьи 352 Гражданского кодекса РА (далее также кодекс), статьи 347 Кодекса и статьи 345 Кодекса: В частности, если обязательство предусматривает или позволяет определить его дату или период, обязательство должно быть выполнено в этот день или в любое время в течение этого периода. обязательства должны быть выполнены надлежащим образом в соответствии с условиями обязательства, законом и другими нормативными актами: Исходя из вышеизложенного, пожалуйста, дайте разъяснение, как возможно применение положений, противоречащих законодательству РА, по приглашению о государственной закупке, и являются ли они недействительными, поскольку в случае победы любого участника в результате этого, он уже обречен на материальный и имущественный ущерб:

Разъяснение

Срок, установленный пунктом 16 технической спецификации (180 календарных дней, из которых 50 дней для «проекта " этапа 1), относится исключительно к разработке проектно-сметной документации, которая не включает в себя проведение простых и комплексных градостроительных экспертиз, проводимых заказчиком. Установленные положения 18-й технической спецификации касаются финансирования работ, поэтому нет никаких противоречий с пунктом 16 технической спецификации и каким-либо нормативно-правовым актом, действующим в Республике Армения. Любое действие по разработке проектно-сметной документации регулируется Постановлением Правительства РА № 596-н от 19 марта 2015 года, в том числе проведение их простых и комплексных градостроительных экспертиз, поэтому проектно-сметная документация может быть принята заказчиком только в случае получения положительного заключения вышеуказанных экспертиз. В период экспертиз, проводимых после представления проектно-сметной документации в комитет градостроительства РА в установленный срок, штрафы к проектирующей организации не применяются. В результате простой и комплексной градостроительной экспертизы, если проект возвращается на доработку, эти работы выполняются проектной организацией, для которой в техническом задании установлены четкие сроки.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии

Нарине Николаян под кодом HHQK-GHKhTsDzB-25/5.

Телефон: 011 621-821.

Электронная почта: tender4@minurban.am.

Оценочная комиссия процедуры закупки под кодом HHQK-GHKhTsDzB-25/5